

ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇԵՇՏՎԱԾՈՒԹՅԱՆ Կ.ԼԵՈՆՀԱՐԴԻ ՀԱՐՑԱՐԱՆԸ

Կ.Լեոնհարդի մեթոդը նախատեսված է անձնային տարաբնույթ շեշտվածությունների (accentuation, акцентуация) բացահայտման համար: Վերջիններս դիտարկվում են որպես նորմայի ծայրահեղ դրսևորումներ, այլ ոչ թե ավտաբանություն: Լեոնհարդը գտնում էր որ շեշտվածությամբ անձինք նորմալ մարդիկ են: Եվ դեռ ավելին, նա նշում էր, որ առանց թեկուզև թեթևակի շեշտվածության մարդը չի կարող զարգանալ ոչ բացասական և ոչ էլ սոցիալ-դրական ուղղվածությամբ: Եվ ընդհակառակը, շեշտվածությամբ անձանց բնորոշ է թե սոցիալ-դրական և թե սոցիալ-բացասական վարքի հնարավոր դրսևորումը: Համաձայն Կ.Լեոնհարդի տվյալների, մեծահասակ բնակչության մեջ շեշտվածությամբ մարդկանց թիվը կազմում է մոտ 50%: Հաշվի առնելով այդ տվյալները, սույն մեթոդը կարող է օգտակար լինել ամենատարբեր գնահատող, հոգեախտորոշիչ և հոգեշտկողական նկատառումներով:

Լեոնհարդի թեստը բաղկացած է 88 հարցից որոնց անհրաժեշտ է պատասխանել «այո» կամ «ոչ»:

Թեստի հրահանգը հնչում է հետևյալ կերպ. «Հարգելի հետազոտվող, Ձեզ ենք ներկայացնում մի շարք պնդումներ որոնք վերաբերվում են Ձեր բնավորության և վարքի որոշ առանձնահատկություններին: Եթե պնդման հետ համաձայն եք, այսինքն այն համապատասխանում է իրականությանը, ապա համապատասխան հարցի/պնդման համարի տակ գրեք « այո/+» նշանը, իսկ եթե ոչ՝ « ոչ/-» նշանը: Շնորհակալություն»:

Տվյալների մշակումն ու արդյունքների մեկնաբանությունը

Արդյունքները գնահատվում են տասը տիպաբանական անդղակներով: Նախ անհրաժեշտ է բանալու օգնությամբ ամեն մի սանդղակի համար հաշվել համընկած «այո» և «ոչ» պատասխանների քանակը: Ամեն մի համընկնում հավասար է 1 բալլի: Հավաքած բալերի գերագույն արժեքը կարող է կազմել 24: Հաշվի առնելով հետազոտվող սանդղակների քանակական անհամարժեքությունը՝ անհրաժեշտություն է առաջանում շտկել, հավասարակշռել դրանք: Այդ խնդիրը լուծելու համար ներմուծվում է «շտկման կոէֆֆիցենտը» (տես Աղյուսակ 9): Այսինքն ստացված «չոր» բալերը բազմապատկվում են սանդղակին համապատասխան շտկման կոէֆֆիցենտով:

Ստացված արդյունքները դիտարկվում են ամեն մի սանդղակի համար առանձին-առանձին և մեկնաբանվում են հետևյալ կերպ.

- Մինչև 8 բալ՝ շեշտվածությունը բացակայում է
- 9-ից 11 բալ՝ միջին ցուցանիշներ
- 12 և ավելի բալ՝ առկա է շեշտվածություն

Թեստի բանալին

<i>Սանդղակները</i>	<i>Պարաստիանի նշանը</i>	<i>Հարցի համարը</i>	<i>Շարժման կոեֆֆիցիենտը</i>
Ht	+	1, 11, 23, 33, 45, 55, 67, 77	x 3
Ri	+	2,15, 24, 34, 37, 56, 68, 78, 81	x 2
	-	12, 46, 59	
Em	+	3,13, 35, 47, 57, 69, 79	x 3
	-	25	
Pe	+	4, 14, 17, 26, 39, 48, 58, 61, 70, 80, 83	x 2
	-	36	
An	+	16, 27, 38, 49, 60, 71, 82	x 3
	-	5	
Ct	+	6, 18, 28, 40, 50, 62, 72, 84	x 3
De	+	7, 19, 22, 29, 41, 44, 63, 66, 73, 85, 88	x 2
	-	51	
Uc	+	8, 20, 30, 42, 52, 64, 74, 86	x 3
Dt	+	9, 21,43, 75, 87	x 3
	-	31, 53, 65	
Ex	+	10, 32, 54, 76	x 6

Շեշտվածության տեսակները

Հիպերթիմներ (*Hyperthimic* - Ht): Այս խմբի մարդիկ առաձնանում են տրամադրության բարձրացման միտվածությամբ, զանազան գործունեության տեսակներում արտահայտված ակտիվությամբ, հետաքրքրությունների բազմազանությամբ, ֆիզիկական և հոգեկան բարձր դիամցկունությամբ: Անձնային այս տիպի առավել վառ դրսևորումներն արդեն կրում են հիպոմանիակալ բնույթ:

Այս տիպի անձինք լավատես են և հեշտությամբ են հաղթահարում տխրությունը: Շնորհիվ գործելու առկա մեծ ծարավի, նրանք կարող են հասնել արդյունաբերական և ստեղծագործական մեծ հաջողությունների: Գործելու անհագ ծարավը նրանց կարող է մղել նորի որոնմանը և մշտապես նախաձեռնություն դրսևորելուն: Գլխավոր ուղղուց, մտքից շեղումը նրանց մոտ միշտ նոր մտքեր և գաղափարներ է ծնում, որն էլ իր հերթին նպաստում է ստեղծարար մտածողության ակտիվացմանը:

Հիպերթիմ անձինք փայլուն գրուցակիցներ են և ունակ են զվարճացնել բոլորին, այդ իսկ պատճառով էլ միշտ գտնվում են ուշադրության կենտրոնում

Ռիգիդներ (*Rigidity* - Ri): Այս խմբին, որին այլ կերպ Լեոնհարդը անվանում է նաը պարանոիկ, պատկանող անձանց բնորոշ է աֆֆեկտի ախտաբանական կայունությունը: Վարքում դա դրսևորվում է սեփական նշանակալիության բարձրացման ձգտումի շեշտվածությամբ, փառասիրությամբ, նպատակաուղղվածությամբ, անարդարության նկատմամբ զգայունությամբ:

Այնտեղ որտեղ այս խմբին պատկանող անձը կարողանում է գտնել բարեհարմար պայմաններ սեփական պահանջմունքների բավարարման և նպատակների իրագործման համար՝ հարմարվողականությունը լիարժեք է և անհատը կարող է հասարակության օգտակար անդամ լինել: Սակայն հակառակ դեպքում, ինչպես նաև ռիգիդության չափից դուրս վառ արտահայտվածության դեպքում, նկատվում է հիվանդագին նեղացկոտություն, սեփական կարողությունների գերազնահատում, կասկածամտություն, իսկ սեփական անհաջողությունները պատճառաբանվում են շրջապատի դժկամությամբ և անբարեկամեցողությամբ:

Առանձին ուշադրության է արժանի էգոիստական աֆֆեկտի հետևանքները այս տիպին պատկանող անձանց մոտ, երբ դիպչում են նրանց անձին: Աֆֆեկտը նման դեպքերում հանդես է գալիս ի պատասխան խոցված հպարտության, վիրավորված ինքնասիրության, ինչպես նաև զանազան այլ բնույթի ճնշումների: Նման սուր հակազդում նրանց մոտ դիտվում է նույնիսկ այն դեպքերում երբ շրջապատի կարծիքով բավարար պատճառներ դրա համար չկան, այսինքն նույնիսկ այնպիսի դեպքերում երբ հասցված բարոյական վնասը չնչին է:

Որպես կանոն, անձնական վիրավորանքները այս տիպի անձինք երբեք չեն մոռանում, այդ իսկ պատճառով էլ հաճախ նրանց բնութագրում են որպես հիշաչար և վրիժառու մարդկանց:

Էմոտիվներ (*Emotive* - Em): Էմոտիվությունը բնորոշվում է զգայունությամբ և խորը հակազդումներով՝ նուրբ հույզերի ոլոտում: Այս մարդկանց հուզում են ոչ թե կոպիտ

զգացմունքները, այլ այնպիսիները, որոնք մարդիկ հաճախ կապում են հոգու, մարդասիրության և քնքշության հետ:

Այս տիպի մարդկանց սովորաբար «փափակասիրտ» են անվանում: Նրանք ավելի խղճահարվող են, առավել հեշտ են հուզվում, յուրահատուկ ուրախություն են ստանում բնության, կենդանիների և արվեստի հետ շփվելիս:

Էմոտիվ մարդկանց փափկասրտությունը դրսևորվում է նրանց արտաքին դրսևորումներում: Նրանց հետ զրուցելիս կարելի նկատել թե ինչպես են նրանք ոգևորվում և տարվում այն զգացմունքներով որոնց մասին խոսում են. այդ ամենը շատ լավ երևում է նրանց դիմախաղում: Առավել հատուկ է նրանց լավկանությունը. նրանք կարող են արտասվել ասենք տխուր վերջաբանով ֆիլմի կամ պատմվածքի մասին պատմելիս: Նույքան հեշտությամբ էլ նրանց մոտ կարող են առաջանալ ուրախության և զգացվածության արցունքները:

Պեդանտներ (*Pedantic – Pe*): Այս տիպի անձինք առանձնանում են բնավորության այնպիսի գծերով որոնք անմիջականորեն կապված են պատասխանատվության և մանրակրկիտության հետ: Եթե պեդանտությունը դրսևորվում է միայն բնավորության շեշտվածության տեսքով, ապա նման անձի մոտ վարքը դուրս չի գալիս բանականության սահմաններից: Իսկ մասնագիտական գործունեության ոլորտում պեդանտ անձնավորությունը իրեն դրսևորում է միայն դրական կողմից, քանի որ միշտ բարեխղճորեն է կատարում է իր շխատանքը: Սովորաբար աշխատանքի վայրում նման մարդկանց բոլորը լավ ճանաչում են և գիտեն որ կարող են նրանց վրա հույս դնել և վստահել այնպիսի աշխատանք որը պահանջում է առավելագույնս ճշգրտություն և մանրակրկիտություն:

Սակայն պատկերն այլ է բացահայտ ավտաբանության առկայության դեպքում, որտեղ պեդանտ տիպին համապատասխանում է անանկաստային փսիխոպատիան:

Եթե հիստերիկ տիպի անձնաց բնորոշ չէ վարքի բանական կշռադատվածությունը, ապա անանկաստները միշտ ձգում են որոշման ընդունումը, և նույնիսկ այնքան ժամանակ մինչև որ անցնում է դրա համար հատկացված ժամանակահատվածը: Վերջիններս մինչև գործը սկսելը անպայման միքանի անգամ, կրկին և կրկին պետք է համոզվեն որ առավել լավ տարբերակ գոյություն չունի: Անանկաստը ունակ չէ սեփական կասկածները արտամղել, իսկ դա իր հերթին արգելակում է նրա գործողությունները: Այսպիսով հիստերիկ տիպի անձանց վարքի անկշռադատվածությանը հակադրվում է անանկաստների չկողնորոշվածությունն ու վերջնական որոշումներ ընդունելու անկարողությունը:

Անանկաստը շատ ժամանակ սեփական կամքով կատարում է արտաժամյա աշխատանքներ որպեսզի կարողանա հասցնել և ետ չընկնել գրաֆիկից: Ոչ պակաս դժվարություններ են հանդիպում անանկաստին նաև առօրյա կյանքում, երբ նա տանից դուրս գալուց հետո անընդհատ սկսում է մտածել թե լավ է արդյոք կողպել դուռը, կամ ասենք հանել է արդյոք վարդակից արդուկի լարը և չկարողանալով արտամղել այդ կասկածները՝ վերադառնում է տուն և ստուգում: Երբեմն նաև պատահում է որ վերադառնալուց և ստուգելուց հետո, քիչ անց նորից են նրան համակում կասկածները և նա ստիպված է լինում վերադառնալ և ստուգել ևս մեկ անգամ: Անանկաստին, այսինքն շեշտվածության պեդանտ տիպի ավտաբանական զարգացման դեպքում, բնորոշ են կաշուն նևրոզները:

Տագնապայիններ (*Anxiety – An*): Եթե ընդհանուր նկարագրելու լինենք՝ այս խմբին պատկանող անձանց բնորոշ է բնավորության մեջ տագնապային գծերի գերակայությունը:

Նման տիպի անձինք փոքր հասակում շատ տագնապային-վախկոտ են լինում, օրինակ վախենում են մութ կամ դատարկ սենյակում քնելուց, չլուսավորված սենյակներ և միջանցքներ մտնելուց: Վախենում են շներից, վախից դողողում են բարձր ձայներ լսելիս կամ ասենք որոտի ժամանակ: Եվ վերջապես, վախենում են այլ երեխաներից, քանի որ վերջիններս հաճախ հետապնդում են իրենց և ձեռք են առնում:

Մեծահասակների մոտ, բնականաբար, պատկերը քիչ այլ է: Շրջապատ մարդիկ այդքան էլ վախենալու չեն իրենց համար, սակայն սեփական տեսակետը պաշտպանելու և առաջ տանելու անկարողությունը պահպանվում է նաև այս տարիքում: Հերիք է որ հակառակորդը մի փոքր-ինչ ավելի վստահ հանդես գա, և տագնապային անձը միանգամից տեղի է տալիս: այդ իսկ պատճառով էլ նման անձինք առանձնանում են երկչոտությամբ, որի մեջ նկատվում է ենթարկվողության և նվաստացվածության տարրեր: Հաճախ, տագնապային անձանց վարքը և դիրքորոշումը միջանձնային հարաբերություններում կարծես ասում է. «ինչ կլինի, ինձ մի նեղացրեք»:

Ցիկլոթիմներ (*Cyclothimic – Ct*): Ընդհանուր առմամբ, ցիկլոթիմ տիպին, որին Կ.Լեոնհարդը անվանում է նաև աֆֆեկտիվ-լաբիլ տիպ, բնորոշ են հիպերթիմ և դիսթիմիկ վիճակների անընդհատ մեկը մյուսով փոխարինվելը: Գործնականում դա նշանակում է, որ ցիկլոթիմի մոտ կարող է նկատվել մեկ շատ բարձր տրամադրություն, մեկ էլ ցածր: Ընդ որում դրանք անընդհատ մեկը մյուսին կարող են փոխարինել սկսած ամսվա մեջ միքանի անգամից մինչև օրվա մեջ միքանի անգամ: Հետաքրքրական է, որ ուրախալի իրադարձությունները նման անձանց մոտ ոչ միայն ուրախության հոյզեր են առաջացնում, այլ նաև զուգակցվում են հիպերթիմիայի ընդհանուր պատկերով. գործելու, ինչ-որ բան ձեռնարկելու ծարավով, խոսքային գերակտիվությամբ՝ անընդհատ խոսելու ցանկությամբ, գաղափարների և մտքերի թռիչքով: Իսկ տխուր իրադարձությունները առաջ են բերում ճնշվածություն, ինչպես նաև հակազդումների և մտածողության հապաղումներ:

Պետք է նշել նաև տրամադրության փոփոխության պատճառը միշտ չէ որ արտաքին գրգռիչներն են լինում: Տագնապային տիպի հետ զուգահեռներ ունի նաև բիպոլյար աֆֆեկտիվ խանգարումը¹ (նախկինում՝ մանիակալ-դեպրեսիվ փսիխոզ), որը նույնպես երկբևեռ բնույթ ունի:

Ցուցադրականներ (*Demonstrative – De*): Ցուցադրական, կամ առավել ուժեղ շեշտվածության դեպքում՝ հիստերիկ, տիպի անձի էությունը կայանում է նրա արտամղման անոմալ կարողության մեջ: «Արտամղում»² ասելով նկատի ունենք այն, երբ մարդ կարողանում է մի որոշ կամ նույնիսկ շատ երկար ժամանակով սեփական հիշողությունից արտամղել այս կամ այն իրադարձությանը, առարկային կամ երևույթին վերաբերվող տեղեկատվությունը, հուշը: Իրականում բոլոր մարդիկ էլ այս կամ այն առիթով դիմում են արտամղմանը, հատկապես երբ խոսքը գնում է տհաճ հիշողությունների մասին, սակայն նման արտամղումը խորքային չէ, և արտամղված բովանդակությունները մնում են գիտակցության շեմքին ու

¹ տես՝ **ICD-10**: F31, Bipolar Affective Disorder; **DSM-IV**: 382, Bipolar Disorder

² Այս հասկացությունը գիտություն է ներմուծել դեռ Զիգմունդ Ֆրոյդը (Sigmund Freud)

ամբողջովին չեն մոռացվում: Իսկ հիստերիկ տիպի անձանց մոտ պատկերն այլ է. նման անձինք կարող են իրականում «մոռանալ» այն ինչ որ չեն ուզում հիշել:

Հիստերիկ տիպի անձինք ունակ են ստել՝ առանց հասկանալու որ ստում են: Գիտակցված սուտը միշտ զուգակցվում է խղճի խայթով կամ բացահայտված լինելու վախով, որն էլ իր հերթին պատճառ է հանդիսանում զանազան ֆիզիոլոգիական փոփոխությունների տվյալ պահին սուտ խոսողի մոտ. նա երբեմն խառնվում է իրար, կարմրում են ականջների բլթակներն ու այտերը, քրտնում է, փոխվում է խոսքի արագությունն ու ձայնի տոնայնությունը, և այլն: Սակայն հիստերիկ անձի մոտ ստելիս չեն նկատվում վերընշված երջևորդները: Նա ստում է անմեղ հայացքով՝ ընկերաբար և անկեղծորեն ներկայացնելով տեղեկատվությունն իր զրուցակցին: Բանը նարնում է, որ հիստերիկ տիպի անձի համար իր սուտն իր իսկ համար վերածվում է ճշմարտության: Նա ինքը ակամայից սկսում է հավատալ իր ստին և դասում է այն ճշմարիտ հիշողությունների շարքում:

Հիստերիկ անձնաց ստելու հետ մեկտեղ բնորոշ է նաև ձևացնելը (притворство): Անհրաժեշտության դեպքում հատկապես երբ պետք է լինում մի ինչ որ ոչ ցանկալի իրավիճակից կամ կիրառարձությունից խուսափել, նրանք կարող են իրենց մոտ այս կամ հիվանդության ախտանիշը կամ մի ամբողջ խումբ ախտանիշներ դրսևորել: Ընդ որում, շատ ժամանակ հիստերիկ անձը նույնիսկ չի էլ գիտակցում որ այդ ամենի հեղինակը հենց ինքն է:

Գրգռվող-անհավասարակշռվածներ (*Uncontrollable* – Uc): Գրգռվող տիպի էական առանձնահատկությունն է անվերահսկելիությունն ու անկառավարելիությունը: Վերջիններս դրսևորվում են նրանում որ հաճախ կանխակերպն ու վարքը ուղղորդում են ոչ թե առողջ բանականությունը, արարքների տրամաբանական կշռադատվածությունը, այլ ներքին մղումները, բնազդներն ու անկառավարելի *побуждения*: Այն ինչ հուշում է բանականությունը՝ պարզապես ուշադրության չի արժանանում:

Գրգռվող անձնաց հակազդումները իմպուլսիվ են: Եթե ինչ որ բան նրանց դուր չի գալիս՝ չեն էլ փորձում հաշտվելու ուղիներ փնտրել. նրանց օտար է հանդուրժողականությունը: Դիմախաղում և խոսքում ազատություն են տալիս նյարդայնացվածությանը և բացահայտ հայտարարում են իրենց պահանջների մասին կամ էլ չարացած հեռանում են: Արդյունքում նման անձինք նույնիսկ ամենաչնչին պատճառով վիճաբանության մեջ են մտնում ղեկավարության և գործընկերների հետ, կոպտում են, մի կողմ են նետում աշխատանքը և աշխատանքից հեռանալու դիմում են գրում՝ առանց հետևանքների մասին մտածելու:

Դժգոհության պատճառները կարող են լինել տարբեր. մեկ իրենց դուր չի գալիս թե ինչպես են իրենց հետ վերաբերվում այդ կազմակերպությունում, մեկ աշխատավարձն է ցածր, կամ աշխատանքային գործընթացն իրենց սրտով չէ և այլն: Բացառիկ դեպքերում է միայն լինում որ դժգոհության պատճառ աշխատանքի ծանրությունը կամ դժվարությունն է լինում, քանի որ գրգռվող անձինք, որպես կանոն, ֆիզիկական աշխատանքի նկատմամբ հակում ունեն և նույնիսկ կարող են առավել բարձր արդյունքներ ցույց տալ քան այլոք:

Նյարդայնացնում, գրգռում է նրանց ոչ այնքան աշխատանքի լարվածությունը, որքան կազմակերպչական պահերը: Արդյունքում անընդհատ վիճաբանությունների հետևանք որպես դառնում է անընդհատ աշխատանքի վայրը փոխելը:

Երբեմն գրգռվող անձինք նյարդայնացած ժամանակ կորդ են խոսքերից անցնել գործին և գործի դնել բռունցքերը: Ընդհանրապես այս տիպի անձինք այդքան էլ միտված չեն բանակցությունների և կարծիքների փոխանակության:

Ախտաբանական աստիճանի իմպուլսիվության դեպքում կարող են զարգանալ տարաբնույթ հակումների, ավելի ճիշտ սովորությունների խանգարումներ, ինչպիսիք են օրինակ սննդային և ակրոհոլային կախվածությունը:

Դիսթիմներ/հիպոթիմներ (Dysthymic/Hypothymic – Dt): Դիսթիմ տիպի անձը հիպերթիմի ուղիղ հակառակն է: Այս տիպի անձինք իրենց բնույթով լուրջ են և սովորաբար առավել կենտրոնացած են կյանքի մոայլ, տխուր քան ուրախ կողմերի վրա: Իրենց մինչև խորքը ցնցած իրադարձությունները կարող են հասցնել վերջիններիս միքնչև ռեակտիվ դեպրեսիայի, հատկապես այն դեպքերում, երբ դիսթիմ անձի մոտ առկա են ուժեղ արտահայտված ենթադեպրեսիվ գծեր:

Կենսագործունեության խթանումը դիսթիմիկ խառնվածքի դեքում շատ թուլացած է, միտքը դանդաղեցված է: հասարակության մեջ դիսթիմ տիպի անձինք համարյա թե չեն մասնակցում զրույցներին:

Լուրջ տրամադրվածությունը բերում է լուրջ բարոյագիտական դիրքորոշումների ձևավորմանը և առաջնային պլան է մղում այնպիսի նուրբ, վեհ զգացմունքներ, որոնք անհամատեղելի են մարդկային էգոիզմի հետ: Հենց այս առանձնահատկությունն էլ հենց համարվում է դիսթիմների հիմնական դրական կողմը: Իսկ պասիվությունը գործողություններում և դանդաղեցված մտածողությունը, երբ վերջիններս դուրս են գալիս նորմայի սահմաններից, հանդիսանում են այս տիպի հիմնական բացասական առանձնահատկությունը:

Ենթադեպրեսիվ խառնվածքը, այսինքն վառ արտահայտված բարձր մակարդակի դիսթիմիան, կարող է անմիջականորեն կապնվել դեպրեսիվ խանգարումների հետ: Մինևույն ժամանակ նման կապի առկայությունը պարտադիր և համատարած բնույթ չի կրում:

Էկզալտացվածներ (Exalted – Ex): Խառնվածքի էկզալտացված տիպը, որը Կ.Լեոնհարդն անվանում է նաև աֆֆեկտիվ-էկզալտացված, կարելի է անվանել տագնապի և երջանկության խառնվածք, հատկապես երբ այն իր արտահայտվածության մակարդակով մոտենում է փսիխոպատիային:

Այդ անվանումը ընդգծում է վերջինիս կապը «տագնապի և երջանկության փսիխոզի»³ (Anxiety-Happiness Psychosis) հետ, որը զուգակցվում է տրամադրության կտրուկ փոփոխություններով:

Էկզալտացված անձինք հակազդում են կյանքի իրողություններին և իրադարձություններին առավել բուռն քան ուրշները: Հակազդումների արտաքին դրսևորումները առանձնանում են մեծ ինտենսիվությամբ: Էկզալտացված տիպի անձինք մինևույն հեշտությամբ ցնծոյթան մեջ են ընկնում ուրախալի իրադարձություններից, և ընկճվածության՝ տխուր իրադարձություններից:

Սերը երաժշտության, արվեստի նկատմամբ, տարվածությունը սպորտով, կրոնական բնույթի ապրումները և աշխարհայացքի փնտրտուքները ունակ են ամբողջությամբ համակել էկզալտացված անձին և հուզել նրան մինչև հոգու խորքը:

Էկզալտացված անձինք նաև ծայրահեղ տպավորիչ են տխուր փաստերի առիթով: Խղճահարությունը դժբախտ մարդկանց, կամ ասենք հիվանդ կենդանիների նկատմամբ

³ Համաձայն փսիխոզների Կ.Լեոնհարդի դասակարգման

Կարող են նման մարդուն հասցնել մինչև խորը ընկճվածության: Ընկերոջ ինչ-որ սովորական անախորժություն կարող է ընկալել շատ ցավոտ կերպով, նույնիսկ առավել քան հենց տուժողը:

Այս տիպի անձանց մոտ վախը կտրուկ աճելու առանձնահատկությամբ է օժտված, քանի որ նույնիսկ աննշան վախի դեպքում նկատվում են ֆիզիոլոգիական դրսևորումներ (դող, սարսուռ, սառը քրտինք). այստեղից էլ և հոգեկան հակազդումների ուժգնայնացումը:

Էկզալտացված անձանց երբեմն բնորոշում են որպես արտիստիկ էություններ: Նրանց արտիստիկ օժտվածությունն ավելի է լինում քան ասենք որոշակի ոլորտի գիտական ունակությունները, ինչպես օրինակ մաթեմատիկայինը:

Թեստի վերլուծության և մեկնաբանության ժամանակ անհրաժեշտ է առաջնորդվել պրոֆիլի ամբողջական դիտարկման սկզբունքից: Ենթադրություն այս կամ այն տիպի շեշտվածության առկայության մասին կարելի է անել միայն այն ժամանակ երբ կոնկրետ սանդղակով ստացված բալերի քանակը բարձր է 12-ից:

Ձեզ են ներկայացվում պնդումներ, որոնք կարող են վերաբերվել Ձեր բնավորությանը: Եթե Դուք համաձայն եք պնդման հետ, ապա հարցի դիմաց նշեք ԱՅՈ տարբերակը, եթե ոչ՝ նշեք ՈՉ տարբերակը:

1. Հաճախ եք ունենում ուրախ եւ անհոգ տրամադրություն: Այո Ոչ
2. Դուք զգայուն եք վիրավորանքների նկատմամբ: Այո Ոչ
3. Պատահում է, որ կհնոյում կամ թատրոնում լաց լինեք: Այո Ոչ
4. Գործն անել վերջացնելուց հետո, կասկածում եք, որ ամեն ինչ է որ լավ է ստացվել այնքան ժամանակ, քանի դեռ նորից չեք համոզվել, որ ամեն ինչ ճիշտ է: Այո Ոչ
5. Մանկության տարիներին Դուք նույնպե՞ս եղել եք այնքան համարձակ ու ռիսկով, ինչպես Ձեր հասակակիցները: Այո Ոչ
6. Հաճախ է Ձեր տրամադրությունը կյանքի նկատմամբ փոխվում՝ անտարբերությունից մինչև՝ զգվանք: Այո Ոչ
7. Կուլեկտիվում կամ որեւէ խմբում գտնվում եք ուշադրության կենտրոնում: Այո Ոչ
8. Պատահում է, որ առանց պատճառի ունենաք այնքան վատ տրամադրություն, որ ավելի լավ է Ձեզ հետ չխոսել: Այո Ոչ
9. Դուք լուրջ մարդ եք: Այո Ոչ
10. Դուք ընդունա՞կ եք հիանալու ինչ-որ բանով: Այո Ոչ
11. Դուք նախաձեռնո՞ղ մարդ եք: Այո Ոչ
12. Դուք շու՞տ եք մոռանում, երբ Ձեզ վիրավորում են: Այո Ոչ
13. Դուք փափկասիրտ մա՞րդ եք: Այո Ոչ
14. Նամակը փոստարկղի մեջ գցելուց հետո ստուգում եք, արդյոք, արկղն է ընկել թե ոչ: Այո Ոչ
15. Ձգտում եք համարվել լավագույն աշխատակիցը: Այո Ոչ
16. Պատահե՞լ է, որ մանուկ տարիներին վախեցել եք ամպրոպից կամ անձանոթ շնից, իսկ, գուցե, հիմա է՞լ է պատահում: Այո Ոչ
17. Դուք ձգտում եք ամեն ինչում եւ ամեն տեղ կարգ ու կանոն պահպանել: Այո Ոչ
18. Ճի՞շտ է, որ Ձեր տրամադրությունը կախվա՞ծ է արտաքին պայմաններից: Այո Ոչ
19. Ճի՞շտ է, որ Ձեզ սիրում են Ձեր ծանոթները: Այո Ոչ

Բնավորության [անձնային գծերի] շեշտվածության բացահայտման Լեոնհարդի հարցարանը

20. Հաճախ եք ունենում ներքին անհանգստություն. ինչ-որ վտանգի կամ աղետի զգացողություն: Այո Ոչ
21. Հաճախ եք ունենում մի քիչ ճնշված տրամադրություն: Այո Ոչ
22. Պատահե՞լ է գոնե մեկ անգամ որ ընկնեք հիստերիա մեջ կամ նյարդային խզում ունենաք (истерика или нервный срыв): Այո Ոչ
23. Ձեզ համար դժվար է նույն տեղում երկար նստելը: Այո Ոչ
24. Եթե Ձեր նկատմամբ անարդարացի են վարվում՝ Դուք եռանդուն պաշտպանու՞մ եք Ձեր շահերը: Այո Ոչ
25. Դուք կարո՞ղ եք հավ կամ ոչխար մորթել: Այո Ոչ
26. Եթե վարագույրը կամ սփռոցը ճիշտ չի կախված, ջղայնանու՞մ եք դրանից եւ անմիջապես ուղղու՞մ եք այն: Այո Ոչ
27. Փոքր հասակում վախեցե՞լ եք մենակ տանը մնալուց: Այո Ոչ
28. Հաճախ է Ձեր տրամադրությունն առանց պատճառի փոխվում: Այո Ոչ
29. Մի՞շտ եք ձգտում Ձեր գործի մեջ ուժեղ մասնագետ համարվել: Այո Ոչ
30. Դուք շու՞տ եք գայրանում եւ ընկնում գայրույթի մեջ: Այո Ոչ
31. Կարո՞ղ եք անկեղծորեն ուրախանալ: Այո Ոչ
32. Պատահու՞մ է, որ Ձեզ զգաք լիակատար երջանիկ: Այո Ոչ
33. Կկարողանայի՞ք լինել համերգի հաղորդավար: Այո Ոչ
34. Սովորաբար Ձեր կարծիքը արտահայտու՞մ եք բացահայտ: Այո Ոչ
35. Ձեզ համար ծա՞նր է տանել արյան տեսքը: Այո Ոչ
36. Սիրու՞մ եք բարձր անձնական պատասխանատվություն պահանջող աշխատանք: Այո Ոչ
37. Ի վիճակի՞ք եք պաշտպանելու այն մարդկանց, ում նկատմամբ կարծում եք, որ անարդարացի են վարվել: Այո Ոչ
38. Ձեզ համար շա՞տ է դժվար մենակ իջնել մութ նկուղ: Այո Ոչ
39. Երադասու՞մ եք այնպիսի աշխատանքը, որտեղ պահանջվում է արագություն, ոչ թե որակ: Այո Ոչ
40. Դուք շփվո՞ղ մարդ եք: Այո Ոչ
41. Դպրոցում Դուք հաճույքո՞վ էիք բանաստեղծություններ արտասանում: Այո Ոչ

Բնավորության [անձնային գծերի] շեշտվածության բացահայտման Լեոնհարդի հարցարանը

42. Մանկության տարիներին երբեւիցէ փախե՞լ եք տանից: Այո Ոչ
43. Կյանքը Ձեզ դժվա՞ր է թվում: Այո Ոչ
44. Պատահում է, որ կոնֆլիկտից հետո այնքան վշտացած լինեք, որ չկարողանաք որեւէ գործով զբաղվել: Այո Ոչ
45. Կարելի է ասել, որ անհաջողության դեպքում Դուք չեք կորցնում հումորի զգացումը: Այո Ոչ
46. Եթէ որեւէ մեկի հետ վիճել եք, կարո՞ղ եք առաջին քայլ անել հաշտության համար: Այո Ոչ
47. Դուք կենդանիներ շա՞տ եք սիրում: Այո Ոչ
48. Դուրս գալուց հետո Դուք ետ վերադառնում եք, որպեսզի ստուգեք, թե տանը ամեն ինչ է կարգին: Այո Ոչ
49. Ձեզ հետապնդում են մտքեր այն մասին, թե Ձեզ կամ Ձեր հարազատներին վտանգ է սպառնում: Այո Ոչ
50. Համարում եք, որ Ձեր տրամադրությունը փոփոխական է: Այո Ոչ
51. Ձեզ համար դժվա՞ր է ելույթ ունենալ հանդիսատեսի առջեւ: Այո Ոչ
52. Դուք կարո՞ղ եք հարվածել Ձեզ վիրավորողին: Այո Ոչ
53. Դուք մե՞ծ պահանջ ունեք շփվելու այլ մարդկանց հետ: Այո Ոչ
54. Դուք պատկանում եք այն մարդկանց թվին, որոնք հիասթափվելիս ընկնում են ողբերգության մեջ: Այո Ոչ
55. Ձեզ դու՞ր է գալիս այն աշխատանքը, որը պահանջում է բարձր կազմակերպչական որակներ: Այո Ոչ
56. Համառորեն հասնում եք Ձեր նպատակին, եթե անգամ անհրաժեշտ է խոչընդոտներ հաղթահարել: Այո Ոչ
57. Կարո՞ղ է ողբերգական կիսոն Ձեզ այնպես հուզել, որ լաց լինեք: Այո Ոչ
58. Հաճա՞խ եք դժվարանում քնել առաջիկա կամ նախորդ օրվա պրոբլեմի պատճառով: Այո Ոչ
59. Դպրոցում հուշում էիք Ձեր ընկերներին: Այո Ոչ
60. Ձեզ համար շատ է դժվար գիշերը գերեզմանոցով քայլելը: Այո Ոչ
61. Դուք մանրակրկիտ հետեւում եք, որպեսզի Ձեր բնակարանի իրերը իրենց տեղում լինեն: Այո Ոչ
62. Պատահում է, որ դուք գիշերը քնեք լավ տրամադրությամբ եւ վեր կենաք վատ տրամադրությամբ: Այո Ոչ
63. Դուք հեշտությամբ եք հարմարվում նոր իրադրություններին: Այո Ոչ

Բնավորության [անձնային գծերի] շեշտվածության բացահայտման Լեոնհարդի հարցարանը

64. Դուք գլխացավեր ունենու՞մ եք: Այո Ոչ
65. Դուք հաճա՞խ եք ծիծաղում: Այո Ոչ
66. Կարո՞ղ եք բարեհամբույր լինել այն մարդու հետ, ում չեք սիրում, չեք հարգում եւ չեք գնահատում: Այո Ոչ
67. Դուք ակտի՞վ մարդ եք: Այո Ոչ
68. Դուք շա՞տ ապրուներ եք ունենում անարդարության պատճառով: Այո Ոչ
69. Կարելի է ասել, որ Դուք այնքան եք սիրում բնությունը, որ կարող եք համարել Ձեր ընկերը: Այո Ոչ
70. Տևից դուրս գալիս կամ քնելուց առաջ Դուք, արդյո՞ք, մանրամասն ստուգում եք բոլոր լույսերը եւ դռները: Այո Ոչ
71. Դուք շա՞տ վախկոտ եք: Այո Ոչ
72. Ավկոհուլից Ձեր տրամադրությունը փոխվու՞մ է: Այո Ոչ
73. Նախկինում Դուք հաճույքո՞վ էիք մասնակցում գեղարվեստական ինքնագործունեության խմբակին: Այո Ոչ
74. Դուք հոռետեսորեն եք գնահատում կյանքը՝ առանց ուրախության սպասելիքների: Այո Ոչ
75. Ձեզ հաճա՞խ է ձգում ճանապարհորդությունը: Այո Ոչ
76. Ձեր տրամադրությունը կարո՞ղ է կտրուկ փոխվել այնպես, որ ուրախությունը վերածվի զայրույթի: Այո Ոչ
77. Ձեզ հեշտությամբ է հաջողվում բարձրացնել Ձեզ շրջապատողների տրամադրությունը: Այո Ոչ
78. Դուք երկա՞ր եք վերապրում վիրավորանքը: Այո Ոչ
79. Ուրիշների վիշտը երկա՞ր ժամանակ եք հիշում: Այո Ոչ
80. Դպրոցական ժամանակ հաճա՞խ էիք նորից արտագրում ինչ-որ բան, եթե բաց թողում էիք նկատում: Այո Ոչ
81. Դուք մարդկանց վտահությամբ եք վերաբերվում: Այո Ոչ
82. Հաճա՞խ եք մղձավանջային երազներ տեսնում: Այո Ոչ
83. Դուք հաճախ եք զգուշանում, որ հանկարծ մեքենայի տակ չընկնեք: Այո Ոչ
84. Ուրախ ընկերախմբում կարողանու՞մ եք ուրախ լինել: Այո Ոչ
85. Կարողանում եք Ձեր ուշադրությունը կտրել դժվար պրոբլեմից, եթե այն անպայման լուծում է պահանջում: Այո Ոչ

Բնավորության [անձնային գծերի] շեշտվածության բացահայտման Լեոնհարդի հարցարանը

86. Եթե Դուք ալկոհոլ եք ընդունել, ապա դառնում եք պակաս՞ զուսպ եւ ազատ: Այո Ոչ
87. Չրույցի ժամանակ Դուք քչախո՞ս եք: Այո Ոչ
88. Եթե անհրաժեշտ լինի խաղալ որեւէ դեր, ապա կարո՞ղ եք այնպես խաղալ, որ մոռանաք, որ դա խաղ է: Այո Ոչ